

08.07.2017



2017 թվականի հուլիսի 8-ին Եղեգնաձոր

քաղաքում հանդիսավորությամբ նշվել է ՀՀ պաշտպանության նախարարության 4-րդ բանակային կորպուսի կազմավորման 20-րդ տարեդարձը: Այդ կապակցությամբ Եղեգնաձոր քաղաքում անցկացված Չորահանդեսին ներկա են եղել ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ Արքեպիսկոպոս Մկրտչյանը, ՀՀ պաշտպանության նախարարության ԳՇ պետի տեղակալ Օնիկ Գասպարյանը, Վայոցձորցի բարերար Սամվել Սարգսյանը, Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանը, գորամիավորումների հրամանատարներ, ՊՆ ԳՇ վարչությունների պետեր, ազատամարտիկներ, պետական այրեր:

Հանդիսավոր միջոցառման բացման խոսքով հանդես է եկել ՀՀ ՊՆ 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Վալերի Քոչարյանը: Գնդապետը ներկայացրել է գորամիավորման կազմավորման ճանապարհը, անցած ուղին և ձեռքբերումները: Գնդապետ Քոչարյանը նշել է, որ գորամիավորման անձնակազմը իրականացնում հայրենիքի սահմանները անվտանգ պահելու դժվարին, բայց պատվաբեր գործը, այն իրականացնելով մեծ պատասխանատվությամբ: Պաշտպանական գերատեսչության ղեկավարը նշել է, որ գորամիավորման կազմավորման տարեդարձը ևս մեկ առիթ է հետադարձ հայացք նետելու և իրավամբ հպարտանալու գորամիավորման անցած ճանապարհով:

Չորրորդ բանակային գորամիավորման կազմավորման 20-րդ տարեդարձի կապակցությամբ զինվորականներին և ներկաներին շնորհավորել է ՀՀ պաշտպանության նախարարության ԳՇ պետի տեղակալ Օնիկ Գասպարյանը: Շնորհավորական ելույթով հանդես է եկել նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, իսկ օրնության խոսք է հնչեցրել Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ Արքեպիսկոպոս Մկրտչյանը:

Անդրադառնալով Հայոց բանակի մարտունակությանը և Ադրբեջանի կողմից մշտապես հնչող ռազմատենչ հայտարարություններին և հակառակորդի ագրեսիվ գործողություններին՝ բոլոր ողջունողներն իրենց խոսքում վստահեցրել են, որ ինչպես Արցախյան գոյամարտի տարիներին, այնպես էլ այսօր հայ զինվորը պատվով է կատարում իր առջև դրված ցանկացած մարտական խնդիր, առանց երկնչելու՝ զսպող մեխանիզմների միջոցով կանխելով հակառակորդի դիվերսիոն հետախուզական խմբերի անհաջող գործողությունները:

Չորահանդեսին մասնակցում էին բազմաթիվ վայոցձորցիներ և հյուրեր բազմապատկելով ժողովրդի ծոցից ծնունդ առած և նրա անվտանգության երաշխավորը հանդիսացող ազգային բանակի 4-րդ գորամիավորման հորեյանական տարեդարձի տոնակատարության ուրախությունն ու հպարտությունը:

Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել նաև պարզևատրման արարողություն:

Չորամիավորման մի շարք զինծառայողներ, պահեստագործի սպաներ մարտական պատրաստության բարձր ցուցանիշների, բարեխիղճ ծառայության և օրինակելի զինվորական կարգապահության համար պարգևատրվել են մեդալներով, պատվոգրերով և արժեքավոր նվերներով: Հանդիսավոր միջոցառման ընթացքում եղել են զինվորականների ֆիզիկական պատրաստության ցուցադրական ելույթներ: Այն եզրափակվել է գորամիավորման ստորաբաժանումների Չորահանդեսով: Ներկաներին ողջունել են նաև գեղարվեստական համարներով՝ ռազմահայրենասիրական երգերի ու ազգային պարերի կատարումներով: